կանք Գաղղիոյ և հետեւողք նոցին՝ յորմէ ազգէ և իցեն, 'ի գալստեան նոցին յԵրուսաղէմ, մի պահանջեսցեն 'ի նոցանէ ոսկի և կամ արծաթ։ Եւ դարձեալ մատոյց զայլ հրովարտակ, գրեալ յելս Շէվվալ ամսոյ՝ ١٠٤٥ (1635)։ Ուր ասէ. մի՛ ոք հակառակեսցի Լատին կղերաց, եւ զոր ինչ միանգամ ունին 'ի ձեռս իւրեանց 'ի տաճարին Ս. Յարութեան, 'ի Բեթղեհէմ, և այլ տեղիս, որք յատկացեալ են ինքեանց։ Յետ ընթերցման վաւերական գրոց յերկուց կողմանց, յայտ արար դատաւորն 'ի ժողովի անդ միաբանացն Յունաց, չհակառակիլ ընդ Լատինս, զի սիւնազարդ դաւիթ եկեղեցւոյն Բեթղեհէմի՝ հասարակաց է՝ և ճանապարհ երից վանաց. վանքն, քարուկիր չինուածն և պարտէզն են 'ի ձեռս Լատինաց, ժառանգեալ զայն 'ի վաղ ժամանակաց. և զնուագարանն արդէն բարձեալ են 'ի դըրանէ Գերեզմանին. և պատուէր ետ Յունաց չվիճել ընդ Լատինս հակառակ Կայսերական հրովարտակաց եւ դաշնագրոյն, որ ընդ Շարլ Թագաւորին Գաղղիոյ, յելս Շապան ամսոյ՝ ١١٠٠ (1688)։

Յաւուրս Սուլթան Սիւլէյման Բ. Արքայի՝ զկնի պատերազմին և հաշտութեան ընդ Գերմանացիս, միջնորդութեամբ դեսպանին Գաղղիոյ, Լատինք վերստին տիրեցին Ս. Տեղեաց, որպէս աւանդի 'ի ձեռագիրս ինչ գրեալ 'ի նմին ժամանակի եւ յաւուրս Յովհաննէս Պատրիարքի. սոքա են որոց տիրեցին Լատինք, Գերեզմանն Քրիստոսի եւ չրջապատ նորին. մեծ և փոքր գմբեթքն. չորրորդ բանան Քրիստոսի. Խաչ Գիւան, Գողգոթան եւ Տարածման տեղին. Պատանատեղին Քրիստոսի. բարձին անսովոր զաշտանակս և զլապտերս Յունաց, 'ի դրանէ Գերեզմանին մինչ ցերկաթեայ դուռն, բառնալով նաեւ զերկաթի վանդակսն, խոփանեցին զկոչնակն, վերին յարկն եօթն կամարաց Ս. Կուսին. մեծ եկեղեցին Բեթղեհէմի եւ Այրն Ծննդեան, հարաւային և հիւսիսային դրունք նորին. հիւսեալ խցին զդրունս զոր բացեալ էին Յոյնք՝ բաց 'ի դըրանէ աւազանին 'ի սիւնազարդ դաւթին. եւ զամենայն ինչ արարին ըստ կամաց իւրեանց, յորոց վերայ զարմացեալ հիանային Յոյնք՝ թէ ո՞ղպէս յանկարծ այսպիսի փոփոխութիւնք պատահեցան (1690)։ Եւ այսպէս մնաց 'ի